ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

«ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.05.2023թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Ալֆրեդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Աստղիկ Մարաբյան, Գառնիկ Մոմջյան, Գոհար Սահյան, Զարուհի Հայրապետյան, Անի Պապիկյան, Դավիթ Պողոսյան, Արմեն Հովհաննիսյան, Անահիտ Միքայելյան, Գուրգեն Գասպարյան, Անուշ Բաբայան, Մարինա Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների հայտերի ներկայացման մասին.

1.1 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 86-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգի «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների հայտերի ներկայացման ժամկետն է՝ 2023 թվականի մայիսի 15-ը, ժամը 15:00-ն, հաշվի առնելով, որ վերջիններիս այն տրամադրվել է 16.03.2023թ:

2. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

2.1 «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

3. Տեղեկատվություն երկրորդ փուլի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտ են ներկայացրել հետևյալ նախաորակավորված մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիում
2	«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ
3	«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ

4. Տվյալներ հայտերի և դրանցում գնային առաջարկների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 88-րդ կետի և երկրորդ փուլի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

5. Տվյալներ մասնակիցների հայտերում գնային առաջարկներ պարունակող ծրարների առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.մասին.

5.1 Մասնակիցների հայտերում առակա են գնային առաջարկներ պարունակող ծրարները և դրանք կազմվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 90-րդ կետը՝ գնային առաջարկներ պարունակող ծրարներն առանց բացվելու դրվել են առանձին ծրարի մեջ, որը սոսնձվել և փակվել է, իսկ ծրարի վրա ստորագրել են նիստին ներկա գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Ծրարը առանձնացվել է հատուկ պահոցում:

6. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող այլ փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող այլ փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ մայիսի 30-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:.

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 2023 թվականի մայիսի 30-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Գառնիկ Մոմջյանը

7. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

7.1.1 Բացակայում է ընթացակարգի երկրորդ փուլին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1):

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

7.1.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հարավերով սահմանված ձևաչափին՝

- «ժամանակահատվածը» սյունակում մասնագետների կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին,
- «գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը» սյունակում հստակ նշված չեն մասնագետների կողմից կատարված համանման առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը և դրանց ժամկետները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու մասնագետների նվազագույն աշխատանքային փորձը,
- Ներգրավված մասնագետ Դավիթ Կոստանյանի որակավորումը հստակեցման կարիք ունի,
- Հստակ չեն տարբերակվում հրավերով աշխատակազմում պահանջվող և տեղեկանքով ներկայացված՝ «Տոմսային հարթակի ճարտարապետ-օբյեկտային տարբերակ» և «Տոմսային հարթակի ճարտարապետ-ամպային տարբերակ» մասնագետները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

7.2 «Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում.

7.2.1 Առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

7.2.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հարավերով սահմանված ձևաչափին՝

- «որակավորումը» սյունակում լրացված չեն մասնագետների որակավորումները,
- «գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը» սյունակում հստակ նշված չեն մասնագետների կողմից կատարված աշխատանքների ժամկետները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու մասնագետների նվազագույն աշխատանքային փորձը,

- Ներգրավված մասնագետ Միքայել Ավագյանի որակավորումը հավաստող փաստաթղթերում բացակայում է ծրագրավորման լեզուների իմացությունը հավաստող փաստաթուղթը,
- Հստակ չեն տարբերակվում հրավերով աշխատակազմում պահանջվող և տեղեկանքով ներկայացված՝ «WEB - ծրագրավորող» և «Ծրագրավորող – մշակող» մասնագետները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

7.3 «Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում.

7.3.1 Առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

7.3.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հարավերով սահմանված ձևաչափին՝

- «որակավորումը» սյունակում նշված չեն մասնագետների որակավորումները,
- «ժամանակահատվածը» սյունակում մասնագետների կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին,
- «գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը» սյունակում հստակ նշված չեն մասնագետների կողմից կատարված համանման առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը և դրանց ժամկետները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու մասնագետների նվազագույն աշխատանքային փորձը, անհասկանալի է նաև աշխատակազմում ներառված Հայկ Տոնոյանի և Վիկտորյա Մխիթարյանի կատարած համանման աշխատանքային փորձը, հաշվի առնելով, որ հրավերով նման մասնագետների պահանջ չի սահմանվել,
- Բացակայում են ներգրավված մասնագետներ Սուրեն Կիրակոսյանի, Արսեն Ռուստամյանի և Վիկտորյա Մխիթարյանի հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը,
- Բացակայում է հրավերով աշխատակազմում պահանջվող «Տոմսային հարթակի ճարտարապետ-ամպային տարբերակ» մասնագետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին, «Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումին** և **«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1, 6.2 և 6.3 կետերովով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

8.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ հունիսի 1-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 2023 թվականի հունիսի 1-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և գնահատման գործընթացի շարունակման մասին.

9.1 Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են հանձնաժողովի կողմից 6.1, 6.2 և 6.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունների շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

9.2 «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման գործընթացի շարունակման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը կազմակերպել 2023թ հունիսի 8-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 2023 թվականի հունիսի 8-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Անի Պապիկյանը

10. Երկրորդ փուլի հայտերի գնահատման մասին.

10.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով գնման ընթացակարգի երկրորդ փուլին ներկայացված հայտերի գնահատման արդյունքները.

N	Մասնակիցների գնահատման չափանիշները	Գնահատականը	Մասնակիցների անվանումները և գնահատման արդյունքները		
			«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ	«Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիում	«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ
1	Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերի պահանջներին	Համապատասխանում է Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
2	Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը	Համապատասխանում է Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
3	Բացված յուրաքանչյուր ծրարում առկա փաստաթղթերի կազմման համապատասխանությունը հրավերի պահանջներին	Համապատասխանում է Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
4	Գնային առաջարկներ պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերի պահանջներին	Համապատասխանում է Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
5	«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ	Համապատասխանում է Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար	Բավարար
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ		Հրավերով սահմանված առավելագույնը 100 միավոր	**50.91**	**77.27**	**72.73**

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

11. Գնային առաջարկների բացման նիստի մասին.

11.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 93-րդ կետը՝ «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների բացման նիստը հրավիրել **2023 թվականի հունիսի 15-ին, ժամը 15:00-ին,** ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Նախագահ՝ _____ Ալֆրեդ Քոչարյան

Անդամներ՝ _____ Աստղիկ Մարաբյան

_____ Գառնիկ Մոմջյան

_____ Գոհար Սահյան

_____ Զարուհի Հայրապետյան

_____ Անուշ Բաբայան

_____ Մարինա Հակոբյան

_____ Դավիթ Պողոսյան

_____ Արմեն Հովհաննիսյան

_____ Անահիտ Միքայելյան

_____ Գուրգեն Գասպարյան

Քարտուղար՝ _____ Արսեն Սողոմոնյան